№ 108 Յունիսի 26 (Յուլիսի 8) 1880 Յունիսի 26 (Յուլիսի 8) № 108

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կես տարվանը 6 բուբլի։ Առանձին համարները 5 կոպեկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ոչցի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ—Ղերքին տեսութիւն։ Ցանկալի փոփոխութիւն։ Դամակ Մխիթարովից։ Դամակ Աստրախանից։ Դամակ խմբագրին։ Դէպքեր ըստ բերաբերան։— Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ — Բանասիրական։ Սովը Հայաստանի մէջ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Ղորերում անգլիական պարլամենտում պատահեց մի անցք, որ իր վրա ոչ թէ միայն անգլիական հասարակական կարծիքի ուշադրութեան ուշադրութիւն դարձրեց, այլ և ամբողջ Եւրոպայի։ Մէնք այդ անցքը։

Համայնքների ժողովի մի պատգամաւոր, այն է Ղօրտամղտոնի պատգամաւոր ա. Բրէդլո (Bradlaugh) չէր համաձայնվում կրօնական երդում տալ, այլ պահանջում էր որ իրան թոյլ տրվի երդվել բաղաքականապէս, այսինքն հասարակ կերպով յայտնել, իր հաւատարմութիւնը առանց երդվելու մի որ և է կրօնական գրքի վրա։ Բրէդլո պատգամաւորը պատկանում է անգլիական հանրապետական կուսակցութեանը, իսկ իր համոզմունքով անհաւատ է համարվում, այսինքն չէ պատկանում ոչ մի կրօնական աղանդին, ոչ մի եկեղեցուն։ Բրէդլոի այդ պահանջը մեծ վիճաբանութիւններ յարուցեց համայնքների ժողովի մէջ։ Ընդդիմադրական կուսակցութիւնը և նրա առաջնորդ սրը Սատֆորտ Նորթկոտ պահանջում էին որ Բրէդլոն անպատճառ երդում տայ, եթէ ոչ նա պատգամաւոր չը պէտք է ընդունվի և իրաւունք չը պիտի ունենայ նստել համայնքների ժողովի նստարանի վրա։ Գլադստոն և նոր մինիստրութիւնը պաշտպանում էին Բրէդլոին։ Առաջին մինիստրը մի երկար ճառ ասեց, որի մէջ բացատրեց երդման պատմութիւնը Անգլիայում։ Կրօնական երդումը առաջ մատչելի էր միմիայն անգլիկաններին, այսինքն Անգլիայում տիրապետող եկեղեցուն պատկանող անդամներին, յետոյ երդման ձեւը յարմարեցրին կաթոլիկներին, ժամանակով նրան մատչելի դարձրին և բողոքական այլ և այլ աղանդների ներկայացուցիչներին, — վերջապէս և հրէաներին թոյլ տուեցին իրանց կրօնական երդումը յարմարեցնել ընդհանուր բաղաքական երդմանը, իսկ այժմ մնում է դարձեալ մի քայլ անել բաղաքական և կրօնական համբերողութեան ճանապարհի վրա, այսինքն թոյլ տալ և անհաւատներին իրանց ձեւի երդում տալ։ Գլադստոնը ընտրել է Բրէդլոն պատգամաւորին, ասեց Գլադստոն, և մենք իրաւունք չունենք նրան չընդունել, իրաւունք չունենք թոյլ չը տալ նրան այս կամ այն կերպ երդում տալու, հաւատացող է նա թէ անհաւատ է, մեզ փոյթ չէ։ Մենք մարդկերանց կրօնական համոզմունքները քննադատելու համար կոչված չենք այստեղ, այլ երկրի բաղաքական ներկայացուցիչներ ենք։

Գլադստոնի ճառը առաջին տրպաւորութիւն գործեց, մեծամասնութիւնը ոգևորված կերպով ծափահարում էր նրան, բայց այնուամենայնիւ, երբ քուէարկեցին խնդիրը, մեծամասնութիւնը հակվեցաւ ընդդիմադրութեան կողմը։ 275 ձայն 230 ձայնի դէմ փոխեցին, որ Բրէդլոն, եթէ կամենում է պատգամաւոր ընդունվել, պէտք է կրօնական երդում տայ, և նրան մերժեցին փոխարինել կրօնական երդումը բաղաքական երդումով։ Երևում է որ մեծամասնութեան հետ միացան մի քանի իրանդացիներ, մի քանի մոդերանդ կաթոլիկներ, որոնք ուրիշ հարցերում մինիստրութեան հետ էին քուէարկում։

Բրէդլոն գժգոհ մնաց այդ վճռից և ինքն ներկայացաւ համայնքների ժողովի դահլիճը։ Նրա ասած ճառը այնու ամենայնիւ գործին չօգնեց և նրան յայտնեցին որ իրաւունք չի ունենայ նստել պատգամաւորների նստարանի վրա։ Այն ժամանակ Ղօրտամղտոնի պատգամաւորը յամարձակապէս յայտնեց որ հեռանալու չէ դահլիճից և որ կատարեալ իրաւունք ունի պատգամաւոր լինել, որովհետև ժողովրդի ձեռքով է ընտրված, ինչպէս և միւս բոլոր պատգամաւորները։ Համայնքների ժողովը իր վճիռը կատարել տալու համար, տեսնելով Բրէդլոի կամակորութիւնը և օրէնքներին չը հնազանդվելը, ստիպվեցաւ մի աւելի էլ խիստ որոշում անել։ Բրէդլոն դատապարտվեցաւ բանտարկութեան։ Բայց երկու օրից յետոյ պարլամենտը ազատեց նրան բանտից և Բրէդլոն կրկին ներկայացաւ համայնքների ժողովը իր իրաւունքները պաշտպանելու համար։

Բրէդլոի դրութիւնը այժմ շատ օտարոտի է։ նա պատգամաւոր է, որովհետև ժողովուրդը նրան ընտրեցաւ մինիստրութեան հետ էին քուէարկում։

Բրէդլոն գժգոհ մնաց այդ վճռից և ինքն ներկայացաւ համայնքների ժողովի դահլիճը։ Նրա ասած ճառը այնու ամենայնիւ գործին չօգնեց և նրան յայտնեցին որ իրաւունք չի ունենայ նստել պատգամաւորների նստարանի վրա։ Այն ժամանակ Ղօրտամղտոնի պատգամաւորը յամարձակապէս յայտնեց որ հեռանալու չէ դահլիճից և որ կատարեալ իրաւունք ունի պատգամաւոր լինել, որովհետև ժողովրդի ձեռքով է ընտրված, ինչպէս և միւս բոլոր պատգամաւորները։ Համայնքների ժողովը իր վճիռը կատարել տալու համար, տեսնելով Բրէդլոի կամակորութիւնը և օրէնքներին չը հնազանդվելը, ստիպվեցաւ մի աւելի էլ խիստ որոշում անել։ Բրէդլոն դատապարտվեցաւ բանտարկութեան։ Բայց երկու օրից յետոյ պարլամենտը ազատեց նրան բանտից և Բրէդլոն կրկին ներկայացաւ համայնքների ժողովը իր իրաւունքները պաշտպանելու համար։

Բրէդլոի դրութիւնը այժմ շատ օտարոտի է։ նա պատգամաւոր է, որովհետև ժողովուրդը նրան ընտ-

ՍՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

I.

Թիւրքաց Հայաստանի սովամատնչների գրութիւնը—Պրտեղ է ասիի տարածված սովը։—Տեղեկութիւններ Կ. Պոլսի կենտրոնական մասնաժողովից։—Ռոմի պատահական պատճառներ, պրտակարգ բնական երևոյթներ և հացի պաչարի սպառվելը Հայաստանում մինչև վերջին պատերազմը և պատերազմից յետոյ։—Հարկեր։—Թափառական ցեղեր և աւազակութիւններ։—Մշական պատճառներ. հողային յարաբերութիւններ և բէկերից կախված լինելը։—Հանապարհների բացակայութիւնը։—Հայերի թէփ պակասելը և գաղթականութիւնների պատճառները։—Կայմէի և մեթիալիքի վերջվելը չրջաբերութիւնից, հաց բերելու արդելքը և այլն։—Կ. Պոլսի և Վանի մասնաժողովները։—Ռուսաստանից եկած օգնութիւնը։

—

Հայաստանի ամբողջ ազգաբնակութիւնից միայն հայ տարրն է ուշադրաւէր և արդիւնաբերող։ Թիւրքը ծոյլ և անհոգ է, քիւրդը յափշտակիչ և ծրիակեր է։ Բայց պետական հարկերի ամբողջ ծանրութիւնը հայերն են կրում։ Բայի սրանից, թէպէտ քրիստոնեաները թիւրքիայում հողի սեփականութեան իրաւունք ունեն, բայց իրապէս թէ յափշտակութեան, կամայականութեան և թէ թիւրքաց քիւրդ կալուածատէրերից կախված լինելու պատճառով և թէ այն պատճառով որ հայը քիւրդ և թիւրք բէյերի պարտական է գործել, նա կորցրել է գրեթէ ամեն տեղ իր հայրենիքում հողի սեփականութեան իրաւունքը և այնտեղ է հասել որ իր հողերի միայն կապարատու է դարձել։ Ուրեմն արդիւնաբերութեանը անընդունակ տարրերը հողի սեփականատէր են, իսկ ազգաբնակութեան ուշադրաւէր և արդիւնաբերող մասը, հայերը, զրկված են հողից։ Մեծ մասամբ հայերի ձեռքով մշակվող հողերը վարձված հողերն են։

Անցեալ տարի իմ կարդացած զասախօսութեան մէջ ես նկարագրելի ինչքան ծանր և ինչ բազմատեսակ հարկեր է վճարում հայը թիւրքաց պետական զանձարանին և թիւրք կամ քիւրդ բէյերին, որոնցից նա կախված է։ *) Այլ ևս չեմ խօսում պաշտոնեաների ձեռքով գործված անկանոնութիւնների, յափշտակութիւնների ու կամայականութեան մասին, չեմ խօսում նրանց կաշառակերութեան մասին, չեմ խօսում երկրի անապահով դրութեան մասին կիսավարների ցեղերի աւազակութիւնների կողմից։ Այդ բոլորը կործանիչ ներգործութիւն ունի երկրի կանոնաւոր արդիւնաբերութեան վրա։ Կասեմ միայն որ եթէ հայերը թիւրքիայում կարողանային էլ սեփական հողեր ունենալ և առատ կերպով հացը արդիւնաբերել,—դա ապարդիւն ջանք կը լիներ։ Հաց արդիւնաբերում է (ցանում է) այնքան ցորեն, որքան հարկաւոր է պետական հարկը վճարելու և իր ընտանիքը մի տարի կերակրելու։ Եթէ նա աւելի արդիւնաբերի, այդ աւելին պէտք է փտէր պահեստներում, որովհետև նա ոչ ծախել կարող է իր հացը մոտակայ տեղերում, ոչ տանել վաճառանոցը գաւառից գաւառ, նահանգից նահանգ, ոչ էլ վաճառանել երկրից դուրս։ Պատճառը շատ պարզ է. ոչ մի տեղ որիշառ ճանապարհներ չը կան ամբողջ թիւրքաց Հայաստանում։ Եթէ հայ գիւղացին իր աւելորդ արդիւնաբերած հացը տանի մի գաւառից միւս գաւառը ծախելու, ճանապարհի ծախքը այնքան մեծ կը լինի, որ իր հացի պաչարի գինը չի հասնի։ Եթէ տարու էլ, ծախից էլ,—վերոգրածին կը կողոպտվի աւազակներից, ինչպէս այդ պատահում է այն գաղթական հայ մշակների հետ, որոնք մեզ մոտ Կովկասում ամբարտեւաց յետոյ և քիչ գումար տարիների ծանր աշխատանքով վաստակելուց յետոյ, վերադառնալով իրանց հայրենիքը, թիւրքաց Հայաստանը, չատ անգամ թիւրքաց սահմանը տալը կոխելուն պէս, կողոպտվում են և տարիներով վաստակածը մի բսպէում կորցնում են։

Մենք տեսնում ենք որ թիւրքիան չէ ուշադրում զարգացնել և ծաղկեցնել երկրագործութիւնը Հայաստանում, չէ նպաստում վաճառականութեան և արդիւնագործութեան զարգացմանը, չէ անցկացնում ճանապարհներ իր հպատակ երկրում, համբերում է որ քրիստոնեայ, աշխատասէր, արդիւնաբերող գիւղացին իր հողից զրկվի և նրա հողը անցնի արդիւնաբերութեանը անընդունակ մահմետականի ձեռքը, չէ զգալով աւազակ թիւրքերին և չէրկեզներին, այլ համբերում է որ նրանք կողոպտեն հայերին, իր վարչական պաշտոնների մէջ մինչև անգամ ամենատգոր պաշտօնների մէջ, պայմանամի կամ մըդիրի պաշտօնի մէջ երբէք մի հային չէ նշանակում, չէ սանձահարում պաշտօնեաների կամայականութիւնը և կաշառակերութիւնը, նոր և արդար օրէնքներով չէ կարգադրում հողային յարաբերութիւնները Հայաստանում, ուշադրութիւն չէ դարձնում ծանր և անտանելի հարկերի վրա,—և այդ բոլորի հետևանքը այն է լինում, որ հայ ազգաբնակութիւնը անտեսական և վարչական ճնշման տակ թեւոյ նուազվում է, գիւղացին կամ գաղթում է իր հարազատներից, կամ թողնում է իր գիւղական կեանքը և ապատանում է քաղաքներում, որտեղ սկսում է պարապել արհեստներով և մանրավաճառութեամբ։ Ազգասիրով հայը, ոչ թէ իր սեփական կամքով, այլ հանգամանքների չնորհով, արուեստական ճնշման պատճառով դաւանանում է իր կոչմանը, գիւղական կեանքին, երկրագործական պարապմունքին և դառնում է վաճառական,—և հոգը Հայաստանում զրկվում է իր աշխատասէր և ընդունակ բընիկ մշակներից։ Եւ վաճառականութեամբ պարապողները գեռ ամենաերջանիկ են, իսկ մեծ մասը գիւղացիների գնում են Կ. Պոլիս և ուրիշ քաղաքներ համալսարանները, և սա նեռածանը աշխատանքներն են յանձն առնում։

Մենք այդ բոլորը տեսնում ենք և ասում ենք որ թիւրքաց կառավարութեան այդ սեսակ վարմունքը հայի հետ անհոգութեան, անհետաքրքրութեան և անընդունակութեան արդիւնք է։

Բայց մանաւանդ վերջին ազգասի անցքերի, սովի ժամանակ թիւրքիայի հայերի վերաբերու-

*) Տես «Մշակ» № № 72, 73, 74, և 75, 1879.

ել է, բայց պարլամենտը նրան չէ թոյլ տալիս պատգամաւոր համարել, մի և նոյն ժամանակ իրաւունք չունենալով նրան բարոյական հեռացնել։ Բրէդլօ կրկին տեղ է բռնել նատարանների վրա, բայց իրաւունք չունի ոչ խօսել, ոչ քուէարկել։

Այդ դրութենից դուրս գալու համար մի միջոց կայ միայն,—և այդ շատ լաւ են հասկանում իրանք անգլիացիները,—հարկաւոր է հրատարակել կրօնական կատարեալ ազատութիւն և համերաշխութիւն երդման օրէնքի վերաբերութեամբ։

Բրէդլօի անցքը դեռ մեծ հետևանքներ կունենայ և մի նշանաւոր գարագրուխ կը համարվի անգլիական պարլամենտական կեանքում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԱՆԿԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

—

Այս տարվայ գարունը նոր չունչ, նոր կեանք պարգևելով բնութեանը, պարգևեց և Ռուսաստանին մի բարեար փոփոխութիւն, ընծայեց կայսրութեան բոլոր հպատակ ազգերին մի կենդանարար և փայլուն ցանկալի շնորհ։ Ամբողջ ռուս մամուլը—հասարակութեան ձայն և ներկայացուցիչ—մի առանձին ուրախութեամբ լսեց ազգային լուսաւորութեան մինիստր կոմս Տօլստոյի փոխված լինելու լուրը։ Ոչ ոք չէր աշխատում ծածկել իր սրտի խորին բերկրանքը, ցնծում էին բոլորը։ Ռուսաստանի ամեն մի ծայրում ասվում էին այդ պատնէշի ազգային տոնը։ Հազարաւոր ծողովներ աչքաբաց էին կարգում, շնորհաւորում էին մէկ մէկու այդ ընդհանուր բարգաւորութիւնը։ Ուրախ էին փաքրիկ երեխաներ, ուրախ էին պատանիներ, ուրախ էին ուսանողներ՝—ուրախ էր ամբողջ ռուս հասարակութիւնը։ Տխուր էին միայն նեղսիրտ մինիստրի խոհակիցները, որոնց պարագրեան է ամեն մի առաջ մտքի և կենդանի սկզբունքի անհաշտ թշնամի Կասկովը, այն հանրածանօթ յետադէմ պարբերագրը, որ յամառութեամբ կրկնում է ամեն մի նոր յառաջադէմ փոփոխութեան դէմ, որ փայլուց արդէն վայելում է հասարակութեան լուսաւորված դասի հավանութիւնը, որին, փաստաբանում ասած, ռուս պատմական Իրմայակին չանչեց խլել իր գասագրքի մէջ, ինչպէս երևելի պարլիսան, մի ընդհանուր ծիծաղ յարուցանելով մամուլի մէջ։ Այդ այն Կասկովն է, որ իր թեների տակ հովանաւորված Լիբերմանի և սրա նման ազդեցութեան փառ ու պարծանք պատրանքների հետ ահագին ազդեցութիւն ունէր կոմս Տօլստոյի գործունէութեան վրա, ինչպէս գեղեցիկ կերպով ապացուցանում է «ԳՕԼՈՏՆ» լրագիրը։ Նաև բնական է ուրեմն, որ մինիստրութեան փոփոխութիւնը չէր կարող զուր ալ կոմսի համախոհ ազգիցիներին։ Նաև հասկանալի է նոյնպէս հասարակութեան ուրախութիւնը այդ փոփոխութեան պատճառով։

Պարզ է այստեղից, որ հասարակութիւնը բնականապէս պէտք է սպասի նոր մինիստրութիւնից բոլոր այն վերանորոգութիւնները, որոնք կարդանային հանապատասխանել կեանքի նոր պայմաններին, նոր պահանջներին։ Նոր մինիստր պ. Սարաբուրվի Ծրագիրները ցոյց են տալիս, որ հասարակութիւնը կարող է յոյս ունենալ հասնելու իր ցանկացած նպատակներին։ Ինչպէս հաղորդում են լրագիրները նոր մինիստրը չէ ընդունել իր նախորդի Ծրարրած հանրապետական նոր կանոնադրութիւնը և կամենում է մինչև անգամ տալ համալսարանական ուսանողներին կօրպորատիւական կազմակերպութիւն, մի փոփոխութիւն, որ վայրց արդէն կարմում է ուսանող երիտասարդութեան նուիրական ցանկութիւնը, որ ամենալաւ միջոցն է վերջ տալու ուսանողների մէջ պատահող յանախ խռովութիւններին։ Չէ կարելի ուրեմն չը յուսալ, որ նոր մինիստրութիւնը կը մտցնի նշանաւոր փոփոխութիւն և կլասիկական սիստեմի մէջ, այնպիսի փոփոխութիւն, որ կարող լինի լրացնել հասարակութեան պահանջը, կարողանայ ապահովել հասարաւոր երիտասարդների ապագան։

Ս. Դաւանց

ՆԱՄԱԿ ՄԻԽԱՅԼՈՎԻՑ

—

Մայիսի 16

Շնորհիւ «Մշակ» լրագրի, Հայաստանի սովատանջների յուսալաւոր ձայնը մեր ականջին նս հասաւ, հետևապէս յիշեցրեց մեզ էլ մեր անհրաժեշտ պարտաւորութիւնը—այն է կարելիութեան ձեռք մեկնել դէպի մեր թշուառ հարազատները սովի անձկալի ճանկերից ազատելու համար, որին ամենայն իրաւամբ կարելի է դասել մարդկութեան ամենամեծ պատուհասների շարքումը։ Այդ իսկ նպատակով առաջարկեցի մի ստորագրութիւն բանալ յոգուտ սովեալների, նախ այստեղ Միխայլովի մէջ, երկրորդ անգամ Աբայլեայում, ուր գրեցնաց լինելով մասնաւոր գործերովս ստիպ ուենցայ գտնվել պարոն Մինասեանի տանը հարսանեաց խնջոյքին, որտեղ ներկայ եղող հիւրերը սիրով ընդունվեցի իմ հրաւէրս, չը խնայեցին իրանց նուէրները տալ յոգուտ սովատանջ եղբայրների։

Այժմ ուզարկելով ձեզ, պ. խմբագիր, այդ երկու ստորագրութեան գումարները, խնդրում եմ հասցնէք ուր հարկ է և բարեհաճէք տպեալ նուիրատուների անունները ի միասնութիւն նոցա։ Առաջի ստորագրութիւնից գոյացաւ 70 ր. և 10 կ., իսկ երկրորդից (Աբայլեայում) 30 բուբլի 25 կ., բոլոր միասին կանէ 100 ր. 35 կ.։ Ստորագրութիւնը չարունակվում է։ Փոստի ծախքը վճարեցի ես։ Միխայլովի ստորագրողները. անուն և ազգանուն ստորագրողներ։

Մկրտիչ Կարապետեան 10 ր., Մովսէս Զիֆտաչարեան 10 ր., Յոհաննես Օլօմնեան 10 ր., Մարգար Ցոհաննէսեան 3 ր., Գրիգոր Վանցեան 3 ր., Туровъ (հայ) 5 ր., Дзодзіевъ (օս) 1 ր., Саруханъ-бегъ (հայ) 2 ր., Межебовскій (հրէայ) 3 ր., Կարապետ Մնացականեան 1 ր., Յովհաննէս Սահակեան 1 ր., Պողոս Ներսէսեան 2 ր., Յուլիոնի Առիծեան 5 ր., Աղապապ Մխիթարեան 1 ր., Մկրտիչ Զալանարեան 2 ր., Բագրատ Պէնիկեան 2 ր., Գէորգ Վարդանեան 1 ր., Զաքար մահտեսի Նազարեթեան 1 ր., Գրիգոր Այվազեան 1 ր., Սերգո Վարդանեան Յարութիւնեանց 2 ր., Յովհաննէս Ասդրէասեան 2 ր. 60 կ., Մանուկ Պապիկեան 1 ր., Սարգիս Նազարեան 50 կ., Ընդամենը 70 ր. 10 կ.։

Աբայլեայի ստորագրութիւնը. անուն և ազգանուն ստորագրողներ։

Աղանիկ Օլօմնեան 1 ր., Յոհաննես Օլօմնեան 3 ր., Մարտիրոս Օլօմնեան 3 ր., Ակէքսանդր Օլօմնեան 1 ր., Վաղարշակ Օլօմնեան 1 ր., Առաքել Մելքօնեան 2 ր., Մելքօն Ակիմնեան 1 ր., Մկրտիչ Մուրադեան 1 ր., Յարութիւն Զազարեան 1 ր., Սիմոն Ռաֆայելեան 50 կ., Ամի 50 կ., Տ. Դաւթի Օլօմնեան 2 ր., Տ. Մարիամ Մելքօնեան 3 ր., Տ. Դաւթի Օլօմնեան 2 ր., Տ. Եղիսաբէթ Օլօմնեան 2 ր., Օր. Կատարինէ Օլօմնեան 1 ր., Տ. Աննա Ղանթարեան 1 ր., Տ. Փերոնիա Միհասեան 2 ր., Տ. Ելիսաբէթ Դեմիրեան 50 կ., Տ. Զանազան Մուրատխանեան 50 կ.։ Սերգիսի Մելքօնեան 1 ր., Տ. Հասուսմի Թադեան 25 կ.։ Գումարն է 30 ր. 25 կ.։

Ստեփաննոս Օլօմնեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Մայիսի 1-ին

Գարձեալ ազատեր, գարմանալի է մեր հասարակութեան ազայասիրութիւնը, գարմանալի է նորա քէնող բնաւորութիւնը։ Ժողովներում ոչ ոք չէ խօսում, եթէ ոչ ազան, ոչ ոք չէ առաջարկում ապագայ հոգաբարձուի կամ երեցփոխանի համար կանդիդատ, եթէ ոչ ազան։ Ազան հարուստ է, ազան փող ունի, հետևաբար խելք էլ ունի։ Ազան առաջարկում է այս կամ այն մարդու անունը նշանակել ընտրութեան համար, որի ամենին չը գիտէ գործին ընդունակ լինելը, և ահա միացեալ բազմութիւնից ամեն մէկը ականջները սրած պատրաստ կանգնած են ազայի կամքը կատարելու, նորա ակնարկած մարդուն ընտրելու։ Ցանձնաժողովի անդամներ են ընտրում, մէկ էլ տեսնես ազան, առանց երկար մտածելու, առանց նայելու բազմութեան ձայնին կամ կամքին, ձայն է տալիս երկու կամ երեք մարդիկներին, էյ, պարոններ, ձեզ ենք նշանակում յանձնաժողովի անդամներ այս ինչ հոգաբարձութեան կամ այն ինչ երեցփոխանի հաշիւները տեսնելու։ Եթէ այս ընտրվածների մէջից մէկը բացասում է, թէ այդ իմ գործս չէ, իսկոյն ազան առաջը փակում է. լաւ, լաւ, ասում է, ահա քեզ այս խանութպանը, այն գրագիրը օգնական։ Ահա քեզ, ընթերցող, մեր ժողովների համատան նկարագիրը, մեացեալ ժամանակն էլ անցնում է անօգուտ վէճերով, առանց միմեանց միաքը լիովին հասկանալու. հասարակութեան, ընդհանրութեան կողմը պահպանող չը կայ։ Ազայի կողմն էլ պէտք է պահպանել, որ տակաւին փող է տալիս, որ հարուստ է, ամեն տեղ խօսքը առաջ է, նեղ օրին պէտք կը գայ, իսկ հասարակութեան կողմը ինչու է պէտք պահել, նա խո անձնասերութիւն չէ, նա վերացականութիւն է. և իսկապէս հասարակութիւնը Ատրբախանի մէջ վերացականութիւն է, որովհետև նա ամբողջապէս կապված է մէկը միւսի հետ կապ չունեցող անհատներից։ Մենք այնքան անմիտ իդիօտներ ենք, որ եթէ պատահի, մէկը մեզ ընդհանրապէս, այսինքն հասարակութեանը հոգաբարձի վրա հասցնէ, մենք ամենին չենք հոգալ, այնպէս հանգիստ կը լինենք, որպէս թէ տասն հազարներ օգուտ ենք ստացել, այն ինչ նոյն մարդը, եթէ մի կոպէկի կամենայ վնասել մեր անձնասերութիւնը, իսկոյն կատաղի գազանի նման կը յարձակվենք, պատառ պատառ կուշտնք անել նրան. մինչ դա պարզ ապացոյց չէ, որ մեզանում հասարակութիւնը վերացականութիւն է։

Անցած օրը հ. Քալանթարեանցը իր քարոզի մէջ շատ ուղիղ նկատեց, թէ մեր ժողովուրդը իր հասարակական գործերը կառավարելու համար երեցփոխան կամ հոգաբարձու ընտրելով յանձնում է իր գործը բոլորովին նորա ձեռը, իսկ ինքը ձեռ-

---

թեամբ բռնած ընթացքը համոզում է մեզ այդ ճշմարտութեան մէջ և անտաւտ. դիտոյի համար այդ վարմունքը այնքան կասկածելի է երևում որ մնացել է տալիս թէ ինչ որ անում է թիւրքիան, նա այդ անում է ոչ թէ անշոգութեան, անհեռատեսութեան, կամ անբնդունակութեան պատճառով, այլ հետևում է առաջուց գծագրված, հեռատես, քաղաքական պլանին՝ սպառել, ոչնչացնել, ջնջել հայոց տարրը Հայաստանի մէջ։ Փաստերը հաստատում են այդ կասկածները։

Ահա ապացոյցներ։

Երբ որ մի պետութեան մէջ երաշխաւորիչ է լինում և սով է յայտնվում, ամեն պետութիւն, ինչքան էլ անշոգ լինէր, առհասարակ, աշխատում է, իր կարողութեան չափ օգնութիւն հասցնել իր հպատակներին։ Իսկ թիւրքայ տէրութիւնը, հենց որ սովը յայտնվեց Հայաստանում, իսկոյն հրաման հրատարակեց, որով արգելվում էր ցորենի մուտքը թիւրքայ նահանգներից, կամ Պարսկաստանից։ Այդ բաւական չէ. Կ. Պոլսի մամուժողովի հեռագրերը վկայում են, որ նոյն երկրում, Հայաստանում, կառավարութեան հրամանով թոյլ տրվեցաւ հայ բերել սովատանջ վանեցիներին միայն Վանից հեռանալված Ավագից, իսկ մնացեալ Բիթլիսից արգելվեցաւ տեղափոխել ցորենը։ Անգլիայի հիւպատոսները վկայում են որ շատ տեղ հայի կառավարչական պահեստների վերակացուները ծախում էին մեծ գնով պահեստներում ունեցած ցորենի պաչարը զանազան շարչիներին և հարստատարարներին, իսկ տէրութիւնը յայտնում էին որ սոված ժողովուրդը կոտրեց ամբարները, կողոպտեց այդ հայի պահեստները։ Հայը բաժանվում էր հայերին թշնամի քիւրդերին, իսկ հայերին զբաղեցնում էր ոչինչ չէր տրվում, այն ինչ քիւրդերը անցեալ տարի բաւական կողոպտած էին հայ ժողովուրդը և իրած էին նրանից հայի մնացորդը։ Այժմ քիւրդը կառավարութիւնից իր ստացած հայը կշռին թանգ գնով հայերի վրա էր ծախում.

Բացի սրանից պէտք է ուշադրութիւն դարձնել և մի ֆինանսական կամային մէջոցի վրա, որ թիւրքայ կառավարութիւնը գործ դրեց նոյն մէջոցներում։ Նա առանց այլևայլութեան յանկարծ չրջաբերութիւնից հանեց պետական գրամների տեսակներից մէնը, այն է կայմէ ասված դրամը, և փոքր միջոցից յետոյ յայտնեց որ ժողովրդի ձեռքում մնացած մեծ ալիք ասված դրամն էլ նոյնպէս չէ ընդունում և աղքատացած ժողովրդից սկսեց հարկը պահանջել ոսկով և արծաթով։

Հենց որ Բ. Դուռը տեսաւ թէ լրագրութիւնը խօսում է Հայաստանի մէջ տիրող սովի մասին, իսկոյն արգելեց Կ. Պոլսում հրատարակվող հայ լրագրերին խօսել այդ ահարկայի վրա, իսկ Անգլիայում հրատարակվող հայ լրագրներին և ամսագիրներին արգելից մուտքը թիւրքայ պետութեան սահմանները։ Յետոյ թիւրքայ կառավարութիւնը խափանեց մի քանի լրագրներ նոյն իսկ Կ. Պոլսում.

Այդ ժամանակ Թիֆլիսում կազմվեցաւ հայ կանանց մամուժողով, որպէս բաժին այն ընկերութեան, որ վերջին պատերազմի ժամանակ ռուսաց կառավարութեան թոյլատրութեամբ կազմակերպվեցաւ հայ գաղթականներին օգնելու դիտաւորութեամբ, մեր պարբերական հրատարակութիւնները սկսեցին փողեր ժողովել յոգուտ վաղապրակների սովատանջների, վանի մէջ հիմնվեցաւ սովատանջներին խնամող մասնաժողով, Կ. Պոլսի մէջ հասատվեցաւ Հայաստանի սովատանջներին խնամող կենտրոնական մասնաժողով, Ռուսաստանի նպաստը 50,000 բուբլից աւելի ուղարկեցին իրանց թիւրքայ սովատանջ հայ եղբայրներին, նա հաշուում է 56,000 բուբլ, որովհետև մինչև այժմ «Մշակը» մենակ ուղարկեց 30,000 ր., կանանց կոմիտէը թիֆլիսում 10,000 ր., «Փորձ» խմբագրութիւնը 6000 ր., «Մեղու Հայաստանի» լրագիրը մօտ 4000 ր., ասենք որ մօտաւորապէս էլ մի 6000 ր. ուղարկվեցաւ Ս. Պետերբուրգից և Մոսկվայից մի քանի մասնաւոր անձանց ձեռքով և մեր մի քանի հոգեոր կոնսիստորիաների միջնորդութեամբ.

Եւ ինչպէս վերարերվեց Բ. Դուռը դէպի այդ նուիրատուութիւնները. նա սկսեց ամեն միջոցներով արգելել որ այդ փողերը տեղը հասնեն, հրամանդներ էր տալիս որ Կ. Պոլսի կենտրոնական մասնաժողովից վանի կամ Հայաստանի այլ տեղերը ուղարկվող հեռագիրները ուշանան, կամ բոլորովին անհետանան, հրամանդներ էր տալիս իր պաշտօնեաներին որ հետևեն թէ որտեղ մասնաժողովը փողեր կը բաժանի և աշխատեն իսկոյն հայ ժողովրդից հարկեր ժողովել, (այդ էլ պատճառը որ Կ. Պոլսի մասնաժողովը վախենում էր հաչիւ տալ թէ որտեղ ինչքան փող էր ուղարկում) խոստանում էր սովատանջ ժողովրդին հաց տալ նրանից փոխարինաբար պահանջելով ապագայ հունձքը, բայց չէր կատարում իր խոստումը, ոչ մի տեղ սերմացու չը տալով և հանգիստ ոգով նայելով ինչպէս ժողովուրդը գալիս էր դէպի Պարսկաստան կամ Ռուսաստան, վերջապէս երբ Բ. Դուռը տեսաւ թէ Կ. Պոլսի հայոց մամուժողովը չը նայելով բոլոր արուեստական արգելքներ, բաւական աջող կերպով գործում է, նա հիմնեց թիւրքերից բաղկացած մի մամուժողով և հրամայեց որ հայոց մամուժողովը իր բոլոր փողերը յանձնի թիւրքայ պաչտօնական մամուժողովին։ Հայոց մամուժողովը կարողացաւ իր գոյութիւնը միայն նրանով ապատել, որ գրեց իրան եւրոպական և ամերիկայեան դեսպանների հովանաւորութեան տակ։ Մամուժողովը յայտնեց որ իր ձեռքում ունեցած փողերի մեծ մասը փոխարինութեամբ էր ստացել։

Սրանով ես վերջացնում եմ դասախօսութեան առաջին մասը, իսկ դասախօսութեանս երկրորդ մասի մէջ ես մի թեթև հայացք կը գցեմ երաշխաւորիչ և սովի պատմական մի քանի իրողութիւնների վրա եւրոպական երկիրներում և կը տեսնեմ թէ ինչ ժամանակաւոր և մշտական միջոցներ է առաջարկում երաշխաւորութեան և սովի երևալուն դէմ եւրոպական գործունեայ կեանքը և եւրոպայի հասարակական և քաղաքական գիտութիւնը։

(Կը շարունակվի)